

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ»**

փակ բաժնետիրական ընկերության  
Տնօրենների խորհրդի 13.03.2025թ. որոշմամբ

Արձանագրություն թիվ #1/2025

Խորհրդի նախագահ՝

**Լևոն Աղթունյան**



**«ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՓԲԸ**

**ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՂԱՆՄԱՆ,  
ԴՐԱՆՑ ԲԱՅԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ  
ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ  
ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԵՐՔԻՆ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

Սույն Կանոնակարգը (այսուհետ՝ «**Կանոնակարգ**») սահմանում է «Արինտերլ» ՓԲԸ (այսուհետ՝ «**Ընկերություն**») ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման գործընթացի կարգավորման, ինչպես նաև դեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից Ընկերության կողմից թողարկված արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնները:

1.1. Կանոնակարգը հանդիսանում է Ընկերության ներքին իրավական ակտ և ընդունվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ «**Օրենք**») 170-րդ հոդվածի համաձայն, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածը:

1.2. Կանոնակարգի դրույթները մեկնաբանվում են ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և ներդրողների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

1.3. Կանոնակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1.4.1. «**Ներքին (ինսայդերական) տեղեկություն**»՝ ցանկացած չհրապարակված որոշակի տեղեկություն, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում է մեկ կամ մի քանի արժեթղթերին կամ դրանց թողարկողներին, և որի հրապարակումը կարող է էական ազդեցություն ունենալ նշված արժեթղթերի և (կամ) դրանց հետ կապված ածանցյալ գործիքների գների վրա: Մասնավորապես, ներքին (ինսայդերային) տեղեկություն կարող է հանդիսանալ՝

1. չհրապարակված հաշվապահական հաշվետվությունները,
2. Ընկերության ծախսերի, եկամուտների կամ շահույթի վերաբերյալ կանխատեսումները,
3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների էական փոփոխությունները,
4. Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ կազմակերպության փոփոխման վերաբերյալ տեղեկությունները,
5. Ընկերության նշանակալից մասնակիցների կազմի փոփոխության վերաբերյալ տեղեկությունները,
6. Ընկերության կառավարման մարմինների կազմի փոփոխությունները (բացառությամբ Ընկերության բաժնետերերի կազմի փոփոխությունները),
7. դատական վեճերում Ընկերության մասնակցության վերաբերյալ տեղեկությունները,
8. Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ տեղեկությունները,
9. Արժեթղթերի նախատեսվող թողարկումների (լրացուցիչ թողարկումների), հետգնումների կամ ձեռքբերումների վերաբերյալ տեղեկությունները,
10. Ընկերության խորհրդի կողմից շահութաբաժինների առաջարկվող մեծության վերաբերյալ տեղեկությունները,
11. Ընկերության անվճարունակության կամ որոշակի պայմանագրով պարտավորությունների խախտման վերաբերյալ տեղեկություններ,
12. Ընկերության կողմից կատարվող աշխատանքների, մատուցվող

ծառայությունների, արտադրվող ապրանքների գնագոյացման հաշվարկները և մրցութային բանակցությունների գնային առաջարկները,  
13. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ:

#### 1.4.2. «Ինսայդեր»՝

- յուրաքանչյուր անձ, որն Ընկերության կապիտալում իր մասնակցության, Ընկերության կառավարման որևէ մարմնում իր անդամության, պաշտոնի կամ այլ պարտականությունների կատարման կամ ծառայությունների մատուցման կապակցությամբ տիրապետում է ներքին տեղեկությունների («առաջին խմբի ինսայդեր»),

- Ընկերության ներքին տեղեկության տիրապետող ցանկացած այլ անձ, որը ողջամիտ ուշադրության գործադրելու դեպքում կարող էր տեղյակ լինել, որ այդ տեղեկությունը հանդիսանում է ներքին տեղեկության («երկրորդ խմբի ինսայդեր»),

- յուրաքանչյուր անձ, որը ծանոթանում է Ներքին տեղեկությանը, որի աղբյուրն ակնհայտորեն մեկ կամ ավելի ինսայդեր է («երրորդ խմբի ինսայդեր»),

#### 1.4. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների գաղտնիության պահպանումը

Ընկերությունը, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակներում ընկերության ղեկավարներն ու այլ աշխատակիցները պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր և անհրաժեշտ միջոցները Ներքին տեղեկությունների գաղտնիությունն ապահովելու համար:

(բ) Ընկերության յուրաքանչյուր մակարդակի ինսայդերներին արգելվում է իրենց գործունեության, մատուցված ծառայության կամ կատարված աշխատանքի կապակցությամբ իրենց հայտնի դարձած Ներքին (ինսայդերական) տեղեկություն հրապարակելը, ինչպես նաև իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով՝ դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ընձեռելը (թույլատրել, չխոչընդոտել կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

(գ) Ընկերությունն իրավունք ունի սահմանել Ներքին (ինսայդերային) տեղեկությունների պահպանման և դրանց հրապարակման կանխարգելման միջոցներ, որոնց նպատակն է՝

(1) ներքին տեղեկությունների օգտագործման սահմանված սահմանափակումների հիման վրա Ինսայդերների նկատմամբ վերահսկողության իրականացումը,

(2) ներքին (ինսայդերային) տեղեկությունների օգտագործման կարգի սահմանումը, այդ թվում նաև ինսայդերների կողմից ներքին (ինսայդերային) տեղեկությունների օգտագործումը ի վնաս Ընկերության շահերի:

(դ) Ներքին (ինսայդերային) տեղեկությունների գաղտնիության պահպանման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումներն են՝

(1) Ընկերության հատուկ տարածքների ազատ մուտքի սահմանափակում,

(2) Ինսայդերների հաշվառումը,

(3) ներքին (ինսայդերային) տեղեկություններ պարունակող նյութական կրիչների

վրա «Գաղտնի» կամ «Հույժ գաղտնի» նախագրուշացումների, ինչպես նաև Ընկերության գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների զետեղումը: «Գաղտնի» և «Հույժ գաղտնի» համարվող տեղեկությունները պետք է մատչելի դարձվեն միայն ներքին (ինսայդերային) տեղեկություններին ծանոթանալու իրավունք ունեցող անձանց համար,

- (4) ներքին (ինսայդերային) տեղեկությունների հասանելիության ապահովումը աշխատանքային պայմանագրերի, իսկ իրավաբանական անձ կոնտրագենտների դեպքում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա,
- (5) Ընկերության աշխատակիցների և իրավաբանական (ֆիզիկական) անձ կոնտրագենտների կողմից ներքին (ինսայդերային) տեղեկությունների գաղտնիության պահպանման գրավոր համաձայնությունը,
- (6) ներքին (ինսայդերային) տեղեկությունների մատչելիության ապահովումը միայն դրա համար հատկացված հատուկ վայրերում,
- (7) ներքին (ինսայդերային) տեղեկություններ պարունակող և Օրենքով սահմանված արխիվացման ժամկետից ավել պահպանվող փաստաթղթերի ոչնչացումը,
- (8) աշխատատեղերի (սեղան, դարակ, աշխատանքային համակարգիչ) հասանելիության սահմանափակմանն ուղղված միջոցառումների սահմանումը:

#### 1.5. Ներքին (ինսայդերական) տեղեկությունների բացահայտումը

(ա) Ընկերությունը պարտավոր է ապահովել Ներքին (ինսայդերային) տեղեկությունների բացահայտումն ու հրապարակումը հաշվի առնելով Օրենքի , այլ նորմատիվ իրավական ակտերով և Կանոնակարգով նախատեսված պահանջներն ու նպատակները:

#### 1.6. Ինսայդերների ցուցակը

(ա) Ընկերությանը պարտավոր է վարել Ինսայդերների ցուցակ:

(բ) Ինսայդերների ցուցակի վարումը պետք է թույլ տա Ընկերությանը ստուգել և վերահսկել Ներքին (ինսայդերային) տեղեկությունների շարժը՝ ըստ այդ տեղեկությունների առանձին մասերի:

(գ) Ինսայդերների ցուցակը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները:

#### 1.7. Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակից

(ա) Ընկերությունում պետք է լինի Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակից, որի վրա դրվում են սույն կետի (բ) ենթակետով և 1.5 կետի (դ) ենթակետով նախատեսված պարտականությունների կատարման, միջոցառումների կազմակերպման ու կատարման ապահովման պարտականությունները:

(բ) Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակիցը պարտավոր է.

- (1) Ինսայդերների ցուցակում հստակորեն սահմանազատել Ներքին (ինսայդերային) տեղեկություններին մշտապես հասանելիություն ունեցող և այդ տեղեկությունների հետ առնչվող այլ անձանց,
- (2) պարբերաբար նորացնել Ինսայդերների ցուցակը և ապահովել տվյալ պահին

Ներքին տեղեկությունների տիրապետող անձանց ընդգրկումը դրա մեջ.

- (3) ապահովել Ինսայդերների ցուցակում ներառված տեղեկությունների պահպանումն առնվազն 5 տարվա ընթացքում՝ տվյալ տեղեկության ինսայդերների ցուցակում ներառման օրվանից սկսած.
- (4) ապահովել Ինսայդերների ցուցակը ներկայացումը Կենտրոնական բանկ՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով.
- (5) Յուրաքանչյուր Ինսայդերին ծանոթացնել Կանոնակարգով և դրանով նախատեսված հարաբերությունները կարգավորող նորմերին.
- (6) ստեղծել Ներքին (ինսայդերային) տեղեկությունների օգտագործմանն ուղղված նորմերի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ:

1.8. Ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից Ընկերության թողարկված արժեթղթերով գործարքների կնքումը

(ա) Ընկերության այն ղեկավար անձը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է Ընկերության արժեթղթերը (այսուհետ՝ «Հաշվետու անձ»), պարտավոր է այդ արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելու, ինչպես նաև նրանց սեփականության իրավունքով պատկանող Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով գործարքներ կնքելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Ընկերության Ինսայդերների ցուցակը վարող պատասխանատու աշխատակցին:

(բ) (ա) ենթակետով նախատեսված տեղեկացման ենթակա նվազագույն տեղեկություններն են՝

- 1) գործարքի տեսակը,
- 2) գործարքի կատարման օրը,
- 3) գործարքի մյուս կողմի, շահառուի, իսկ առկայության դեպքում նաև միջնորդի վերաբերյալ տեղեկություններ,
- 4) գործարքի արժեքը,
- 5) գործարքի առարկան (այդ թվում՝ արժեթղթերի քանակը, տեսակը, դասը, անվանական արժեքը)

1.9. Ներքին տեղեկությունների հիման վրա Ընկերության արժեթղթերով գործարքների կատարումը

(ա) Ընկերության այն ղեկավարը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որը Կանոնակարգի և Օրենքի իմաստով հանդիսանում է նաև Ինսայդեր, պարտավոր է ձեռնպահ մնալ իրեն հայտնի Ներքին տեղեկությունների հիման վրա Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով իր կամ երրորդ անձանց հաշվին գործարքներ կատարելուց, Ընկերության արժեթղթերով գործարքներ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու խորհուրդ տալուց:

(բ) (ա) ենթակետով նախատեսված պահանջը չի գործում սկսած այն պահից, երբ Ներքին տեղեկությունը բացահայտվում է Օրենքի 163 կամ 165-րդ հոդվածների հիման վրա:

(գ) Ընկերության այն ղեկավարը, այլ աշխատակիցը կամ նշանակալից մասնակիցը, որը Կանոնակարգի և Օրենքի իմաստով հանդիսանում է նաև Ինսայդեր պարտավոր է ձեռնպահ մնալ Ընկերության արժեթղթերով անձամբ կամ երրորդ անձանց միջոցով իր կամ երրորդ անձանց հաշվին գործարքներ կատարելուց, Ընկերության արժեթղթերով գործարքներ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու խորհուրդ տալուց Ընկերության ֆինանսական (եռամսյակային և տարեկան) հաշվետվության հրապարակմանը նախորդող 15 օրացույցային օրվա և դրանք հրապարակելու օրվա ընթացքում:

(դ) Ենթակետ (ա)–ով և (գ)–ով նախատեսված պահանջը չի տարածվում Ընկերության արժեթղթերով հետևյալ գործարքների վրա,

- (1) երբ Ինսայդերն Ընկերության արժեթղթերը ձեռք է բերել իրեն արժեթղթերի փաթեթի կառավարման ծառայություններ մատուցող անձի միջոցով, եթե վերջինս Կանոնակարգի և Օրենքի հիման վրա Ինսայդեր չի հանդիսանում,
- (2) երբ Ինսայդերն Ընկերության արժեթղթերը ձեռք է բերել նվիրատվության պայմանագրի հիման վրա և նվիրատուն Կանոնակարգի և Օրենքի իմաստով Ինսայդեր չի հանդիսանում:

1.10. Կանոնակարգն ուժի մեջ է մտնում «Արինտերլս» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի կողմից այն հաստատելու պահից: